

Արդ գրեցաւ եւ աւարտեցաւ զիրքս այս ի աստուածախնամ քաղաքն Վէնէտիք օտուաթ տրուի Անտոնի: ի Թվականութեանս Հայոց: Ռ.Ճ.Ժ.Բ. յուլիսի ամսոյն: Գ: Եւ հայրապետութեանս Էջմիածնոյն սրբոյ, Հայոց Տեառն երկցս երանեալ սուրբ փորն մերոյ եւ հովուապետին քաջ փիլիսոփայ ջուղայեցի Յակոբ կամոդիկոսին որ կրկին լուսաւորիչ եղել Հայաստանեայց եւ տանս Հայոց զի յորժամ որ ըսպահան էր Թվականութեանս Ռ.Ճ.Է. եւ ես տրուիս առ ոտըս նորայ ի ծառայութեան կայի. որ ի դուռն Թագաւորին եկեալ էր վասն բազում պատճառի սակս բարեկարգութեան եւ հաստատութեան սուրբ Էջմիածնայ եւ ամենայն եկեղեցեաց տանս Հայոց. որ եւ բարերարն Աստուած քաղցրացոյց զսիրտ Թագաւորին. եւ կատարեաց զամենայն հայցուածս սրտի նորա. եւ բարձրագոյն պատուով եւ խըլայիւք ուղղեւորեաց զնա ի սուրբ Էջմիածինն: Եւ իշխանութեանս ըսպահանոյ Ջուղայոյ վանիցն սուրբ ամենափրկչի հեզահոգի արհի եպիսկոպոսի առաջնորդի եւ հովուին մերոյ. Դաւիթ վարդապետին: Եւ ի Թագաւորութեանս Պարսից երկրորդ Շահապազին. որ բարիք եւ ողորմութիւն ունէր ի վերայ քրիստոնէիցս ազգի: Եւ ի ժամանակս սուրբ պապին Հռոմոյ Աղեքսանդր եօթներորդին որ եւ ի սորայ ժամանակին գնացի ի մեծն Հռոմ. ի յայն ժամանակն վաղճանեալ էր պապն Ինօցէնցիոս (Ժ. Երորդի¹). եւ նստուցին (Է. Երորդի²) Աղեքսանդր սուրբ պապն յամոռ նորա. եւ ես մեղաւոր Անտոնս շրջեցայ յամենայն տեղիս սրբոյն Պետրոսի եւ Պողոսի եւ այլ ամենայն սրբոց. եւ գնացի ի պալաց սրբոյն Պետրոսի եւ խնդրեցի ի մեծամեծաց մտանել ի ներքս առ պապն եւ շնորհեցին ինձ դիպող ժամ մի. եւ գնացի ի ներքս. եւ համբուրեցի զոտս փորն մերոյ սուրբ պապին եւ շնորհեաց ինձ օրհնութիւն մի եւ ունիմ հանապազ ընդ իս. յայնժամն էր Թվին Հայոց Ռ.Ճ.Գ. Ապրիլի ամսոյն ԺԲ: Դարձեալ իշխանութիւն այժմուս ի սոյն քաղաքի Վէնէտոյ, Դոմէնիկօ Կօնդարին դուքին: Եւ հոգեւոր փորն մերոյ եւ հովիւ, եւ սպասաւոր Սուրբ Խաչ եկեղեցոյս Թօխանեցի տէր Սահակին³:

Արդ գրեցի զսա յիշատակ ինձ Անտոնիս, եւ ծնողացն իմոց, եւ կողակցին իմոյ, եւ ամենայն մերձակայիցս. եւ որ յիշէ զմեզ միով տէր ողորմեայիւ եւ ինքն յիշեալ լիցի ի յաւուրն ատենի ուր նըստի Միածինն ընդ յաջմէ Հօր առատ բարերարն. եւ նըմա փառք եւ անգրաւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Հայր մեր որ յերկինս:

Հ. Եղիս Փէշիպեօն

1, 2. Փակագծեալները լուսանցքին վրայ՝ նոյն գրչէն.
 3. Հայոց նախկին բնակութիւնն ի Վենետիկ՝ 1253ին է, Միսիի դուքսէն նուիրուած տան մը մէջ, Ս. Խաչ եկեղեցւոյն տեղը, Բայց եկեղեցին ուշ ունեցած են. նախ մատուռ մը, և այն՝ 1513ի տետները, ինչպէս կը վերահասարակութիւն ազգիս հայոց» վաւերագիրը կ'ըսէ. «Էջմիածնի կաթողիկոսական աթոռն քահանայ մը զայ և 1611ին. Յաջորդները մեզի անձանթ են. Անտոն Դպրի յիշած Սահակ երէց թոխաթեցի ծանօթ է մեզի ԶԸ Սահակ երէցս, հրամանաւ երջանիկ հայրապետին մերոյ Տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի ամենայն Հայոց, կացի երեք ամ և վեց ամիս, առ ի քահանայապետութիւն Հայոց վաճառականաց և Երեւման Ս. Խաչ եկեղեցւոյն»:
 Իբր ժողովրդապետ կը յիշուի Մէրտիմցի Տէր Թադէոս մը, որդի Յոհաննիսի (Թուականն եղծուած է տալանուր աստուածաբան Վրդ. Կարնեցին: Սա կատարած է նուիրակութիւն մը որ 1708ին կը ինդրէ որ իր տեղն անցնի երեւելի խաչածին իննովկենտիս ԺԲի կողմէն, 1698ին. իսկ Ս. Խաչի հովիւ մնացած է 1708-1840, ուսկից վերջ Ուխտի» հայրերը կը շարունակեն մինչեւ մեր օրերը:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ւ Ի Ն Ը Մ Շ Ա Կ Ո Ղ Ն Ե Ր

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ղ Ն Ե Ր

Նիւթապաշտ է ներկայ դարը: Գեղեցիկ արուեստները տուժած են առհասարակ: Այս երեւոյթը կարելի է բացատրել: Գիտութեան զարգացումով՝ աճած է թիւը բոլոր անոնց՝ որ զայն սորվելով փոր կշտացնել կը կամենան: Գիտութիւնը գիտութեան համար սորվողներու թիւը շատ քիչ է, և եթէ կան՝ անոնք անօթի կը մնան այնպէս՝ ինչպէս բանաստեղծը, նկարիչը, երաժիշտը, քանդակագործը:

Այս վիճակն ստեղծած է դասակարգ մը գիտութեան սիրահարներու, որոնց նպատակը՝ ինչպէս ըսինք՝ ազնուական չէ և ճիշդին հետ կապուած: Անոնք կարծեւ լով որ միայն իրենց սորվածն է դրական և գործնական, տեսակ մը արհամարհանք կը տածեն գրականութեան և միւս արուեստներուն հանդէպ, առանց գիտնալու՝ որ ճշմարիտ գրականութիւնը հայեցողականին հետ շատ բան ունի իր մէջ գործնական:

Կարգացած են քանի մը սիրահարական, արկածախնդրական վէպեր և կարծած են թէ այդ է գրականութիւնը. բեմերու առջեւ լսած են «Ճագ»եր՝ և խորհած են թէ այդ է երաժշտութիւնը, զիտած են պաստառի վրայ «ապագայապաշտ» ներկի խոյանքներ՝ և համոզուած են թէ այդ է նկարչութիւնը, բարի բեկորներ տեսած են՝ պզտիկ տղոց շինած ձիւնամարդերէն աւելի այլանդակ՝ և կարծած են թէ այդ է արձանագործութիւնը: Չեն այցելած թանգարանները, լաւ չեն ճանչցած դասականները, արհամարհած են զանոնք, արդի մարդոց սնամիտութեամբ, և իրենց եղկելի ուղեղով եօթներորդ երկինք բար-

ձրացուցած են Այնթապնը առանց հասկընալու՝ թէ ինչ կ'ըսէ ան:

Վարակուած են, և իրենց հետ վարակած ժողովուրդը, որ (réclame) տարփողանքով կը շարժի:

Փարիզի «Opera»ն, Միլանի «Scala»ն զրամապէս մեծ կորուստի կը մատնուին: Մարդիկ, հիմակ խլացուցիչ «Ճագ»երէ և մերկ սրունքներէ աւելի համ կ'առնեն: Նիւթապաշտ է դարը զոր կ'ապրինք

*
**

Կեօթէի հարիւրամեակին առթիւ, թուագիտութեան խեղճուկրակ սպասարկուներ յանդգնեցան մեքենայի մը կառուցուածքը անոր բարդ անձնաւորութեան հետ բաղդատել, և նոյնիսկ յայտնեցին՝ թէ առաջինն աւելի շահեկան կը գտնեն:

Մեքենան, առանց սրտի և հոգիի, գերադաս համարեցին շնչող տարրէ մը՝ որ իր բարձր իմացականութեամբ եթէ կամենար՝ կարող էր իրենց պէս և իրենցմէ աւելի գնահատել գիտութիւնը իր բազմակողմանի երեւոյթներով:

Այդ երանելիները չխորհեցան, աւելի ճիշտ՝ չկրցան խորհիլ թէ մեքենան մտքի արդիւնք էր և զայն հնարող գիտունը, որ իր գլխուն մէջ խելք ունէր և կուրծքին տակ սիրտ, չէր կրնար կոյր մնալ գեղեցիկին հանդէպ, պիտի գիտնար մտածել վրան, զգալ անոր հրապոյրը և գնահատել զայն: Այդ գեղեցիկը արդիւնքն էր զայն մարմնաւորող պատճառին, հեղինակին. ինչպէս մեքենան արդիւնքն էր զայն հնարողին, գիտունին:

Ճշմարիտ գիտունը կը հիանայ ճշմարիտ

գրողին վրայ, ինչպէս ճշմարիտ գրողը՝ փոխադարձաբար:

Դիտած եմ որ ընդհանրապէս միջակութիւնները, — գիտութեան պնակալէզներ որ մեծի հովեր կ'առնեն — կ'աբահամարհեն գրականութիւնը: Անոնք կը կարծեն որ այդ արուեստը կը կայանայ «աչքերդ գեղեցիկ են, սրունքներդ նրբահիւս, լեռները բարձր են, դաշտերը կանաչ» բառերուն մէջ:

Չեն կարգացած, չեն բաղդատած, չեն զանազանած, չեն ուսումնասիրած գրականութիւնը՝ և աջ ու ձախ կը խօսին:

Կ'անգիտանան թէ ճշմարիտ գրականութիւնը գիտութիւն է: Բանաստեղծներ կան որոնց իւրաքանչիւր տողը պատգամ է, մտածել կու տայ, սիրտ կը զղրդէ: Գրողներ կան՝ որ կը խօսին մարդկային հոգւոյն վրայ, կը վերլուծեն ընկերային բարդ հարցեր, եզրակացութեանց կը յանգին, յաճախ կը մարգարէանան գալիք երեւոյթներու նկատմամբ: Հրեայ աստուածաշունչ մարգարէներու հետ պէտք է բաղդատել զիրենք, այլ իրենց վերլուծող մտքին, խորունկ դատողութեան պէտք է վերագրել անոնց պատգամին արժէքը: Եւ ասիկա դժուար է այնքան՝ որքան թուագէտին եռանկիւնաչափական մէկ հաշիւը, լուծելիք խնդիրը:

Ամէն մարդու տրուած չէ հասկնալ Տանդէն էպէս, ինչպէս ամէն մարդու տրուած չէ ըմբռնել Այնշթայնի վարդապետութիւնները:

Ճշմարիտ գրողը և ճշմարիտ գիտունը հաւասարապէս կարող անհատներ են: Կան մտաւոր ձգտումները:

Առաջինին միտքը թէեւ կ'իշխէ սրտին, սակայն անկէ անբաժան է, միշտ միատեղ, այդ իսկ պատճառով կը սիրէ ուսումնասիրել մարդը, շրջանակը՝ որուն մէջ կ'ապրի, իր վիշտերը, առաքելութիւնները, քսութիւնները, կեղծաւորութիւնները և չի սիրեր կապուիլ երկրորդին մտքին նման միայն թիւերու, զիժերու և գրերու հետ: Եթէ իրեն բացատրութիւն տրուի՝ եթէ ուզէ՝ կը հասկնայ զանոնք: Այլապէս՝ ինք իրեն, իր նպատակին կը ծառայէ:

Գիտունն ալ, իր կարգին, իր մտքին ձգտումները կը շահագործէ և կը քալէ իր ճամբէն, եթէ ուսումնասիրէ մնայուն արժէք ունեցող գրական գործ մը կը հասկնայ և կը գնահատէ զայն:

Եւ այս այսպէս շատ լաւ է:

Շէքսպիր պիտի չկարենար Կալիլէոյ ըլլալ, ինչպէս Կալիլէոյ պիտի չկարենար Շէքսպիր ըլլալ:

Առիթ ունեցած եմ յաճախ վիճարանելու երիտասարդ երկրաչափներու հետ: Անոնք չեն կրցած խուսափիլ իրենց շրջանակին և մտայնութեան ազդեցութենէն: Մարդ պէտք է իր անհատականութիւնն ունենայ, անձնական դատողութիւնն ու տեսակէտները:

Սա նորեկուկ գիտունները ոչ միայն ծուռ աչքով կը նային գրականութեան, այլ և բոլոր գեղարուեստին: Իրենց համար գրականութիւն, նկարչութիւն, երաժշտութիւն, քանդակագործութիւն անտի և աւելորդ բաներ են: Չեն գիտեր որ Քրիստոսէ առաջ մեծ մարդիկ գրագէտ և գիտուն էին միաժամանակ. բնականաբար մէկ կամ միւս յատկութիւնը աւելի շեշտուած ձեւով:

Չեն իմացած որ Կալիլէոն գոց գիտէր ամբողջ Բեթրարքան, Տանդէն մեծ մասամբ, Արիստոյ, Թաստոյ:

Կ'անգիտանան թէ Միքէլանճէլոյ, որ բարձր երկրաչափ և ճարտարագէտ էր, բանաստեղծութիւն կը գրէր և նկարչութիւն կ'ընէր և քանդակագործութեամբ կը զբաղէր. Լէոնարտոյ Տա Վինչի մեծ մտածող, չափագէտ, գիտուն, նկարիչ, քանդակագործ էր նոյն ատեն. Նաբոլէոն Ա., որ Կեօթէի Վերթէրը եօթն անգամ կարգացած էր և իր բազմակողմանի աշխատանքին մէջ գրագիտութիւն կ'ընէր:

Ինչ հարկ երկարել շարքը. «Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ»:

Սակայն ծիծաղելին հոն է՝ որ այս յաւակնոտ «գիտունները» կ'երթան ու ակախատես կ'ըլլան «Համլէթ»ի մը ներկայացման և ապշած տուն կը դառնան, որովհետեւ որքան ալ որ անգգայ ըլլան, երբ կրակը իրենց մորթին զպչի վեր կը ցատկեն:

Կը լսեն Պեթհովենի մէկ համերգը և կը զգան որ Նիքիս վեր բաներ կան եղեր աշխարհի վրայ: Հարկ չկայ նորէն կրկնել որ մեր խօսքը քիչ թէ շատ հասկացողութիւն ունեցողներու հետ է:

Հակառակ այս իրականութեան՝ կը շարունակեն իրենց ամէնօրեայ յանկերգը կրկնել: Կը նմանին այն դասակարգին՝ որ «Ես Աստուծոյ չեմ հաւատար, ազատամիտ եմ» ըսելով մեծ մարդ ըլլալ կը կարծեն և չեն գիտեր թէ ինչ է Աստուած, ինչ է Քրիստոնէական վարդապետութիւն: Անբաններն անգամ, եթէ մտածութենէ զուրկ են, զգացում ունին: Եւ ինծի համար անոնք որ չեն ազդուիլ գեղարուեստէն՝ անբաններէն ալ վար են, քան իրենց հաւասար:

Չեմ կրնար երեւակայել մարդ մը՝ բաց ի խելագարներէն — որ բնութեան ծոցին մէջ չգտնէ հոգեկան և մտաւոր գոհունակութիւն: Արդ, եթէ այդպէս է, ես կ'ըսեմ թէ բնութիւնն ամբողջ գեղարուեստ է, քերթուած, երաժշտութիւն, նկարչութիւն: Մեծ է այն հեղինակը՝ որ ամէնէն աւելի ճշգրիտ ձեւով կ'արտայայտէ զայն, կը մօտենայ անոր: Որով մէկը որ չի հիանար այդ հեղինակին վրայ՝ կամ խեղարար է, կամ կեղծաւոր և ստախօս, լազար է, կամ կեղծաւոր և հակառակը որովհետեւ բերանը զգացածին հակառակը կը բարբառի:

Գեղարուեստը առաջ է գիտութենէն. ահա՛ թէ ինչո՛ւ. —

Նախ մարդը պէտք է ապա շոգեկառքը, օղանաւը եւն. մինչդեռ մարդուն հետ պէտք է զգացումը, մտածութիւնը, գեղեցիկը, բնութիւնը:

Գրականութիւնն ըլլալով ուրեմն գեղեցիկ արուեստին կարեւոր մէկ երեսը՝ պէտք է երկրաչափութեամբ մօտենալ անոր: Մինչդեռ կան կեղծ մշակներ՝ որ գրականութեան անունով մակարուծութիւն կ'ընեն:

Գիտութեան բազմաթիւ պնակալէզները զայն այս հեղինակներէն կը դատեն, սահման կու տան և կ'արհամարհեն: Այդ մարդիկը տգէտ են և արգահատանքի արժանի:

Ես ուսուցիչ մ'ունէի որ դասարանի տկար աշակերտներուն «խանութպան եղիր, պանիր ծախէ» կ'ըսէր: Իրաւունք ունէր: Մարդիկ իրենց կոչումին գիտակցութիւնն ունենալու են:

Ապիկար վերաբոյժ մը, եթէ խիղճ ունի, երբեք պիտի չհամարձակի գործողութեան ենթարկել հիւանդը, խորհելով որ կրնայ վտանգել անոր կեանքը և պիտի յանձնարարէ ուրիշ վարպետ բժիշկի մը դիմել:

Ապիկար բանաստեղծը կամ գրագէտը նոյնպէս մտածելու են: Եթէ կը զգան որ իրենք գրականութեան մարդ չեն և իրենց ըրածն ուրիշ բան չէ եթէ ոչ բառախաղ, անիմաստ բացատրութիւն, անկապակից միտք, ինչպէս Յակոբ Պարոնեանի խառազանած բանաստեղծին հետեւեալ տունը.

Մինչ արշալոյսին արեւը բարդ ի բարդ,
Ո՛հ, ո՛հ, ինչ մարդկային գայթ ի գայթ,
Աւաղ, եղճեկ, բաբ է, վայ ինձ,
Վէտ ի վէտ, շիթ առ շիթ, վէտ ի վէտ,

Պէտք է կոտորեն իրենց գրիչը և տեղի տան վարպետներուն: Համեստ ընթերցողի մը դիրքը գրաւել, կարդալ, ուսումնասիրել, այդ ալ արժանիք մ'է:

Գրականութիւնը ժողովուրդներու կեանքին մէջ մեծ դեր խաղացած է: Առանց անոր՝ ազգ մը դժուար թէ կարողանայ ապրիլ:

Լեզուն որքան որ հարուստ է, և անով արտայայտուող մեծ գրագէտներու թիւը որքան մեծ՝ այնքան կենսունակ ըլլալ կը յայտնէ ան:

Ապրելու յամառ կամք, ազատատենչ ոգի՝ ինքնագիտակցութենէ յառաջ կու գան. ու ժողովուրդ մը ինքզինքին կը գիտակցի այն ժամանակ միայն՝ երբ իր ծոցէն լոյս-աշխարհ կը բերէ մեծութիւններ և կը գիտնայ գնահատել զանոնք:

Ազգեր կան որ իրենց ազատութիւնը տոհմային բանաստեղծներուն կը պարտին: Բազմութիւններ յաճախ իրենց թմբիրէն արթնցած են և բռնապետութեան դէմ

զլուխ բարձրացուցած: Սուր բռնել սոր-
ված են, իրենց զինուորական յատկու-
թիւնները զարգացուցած և զիւսանակա-
կան կարողութեանց ճամբայ բացած: Բա-
նաստեղծի մը միակ գերագանց երգը «La
Marseillaise» սրտեր ցնցած է և դէպ ի
յաղթանակ առաջնորդած ազատատենչ հո-
գիները: Յիւսանական յեղափոխութիւնը
նախորդ դարու պատկանած մեծ զրագէտ-
ներու ազդեցութեամբ իրագործուեցաւ:


Մեծ է զրականութեան ուժը, և բարդ

անոր զիմագիծը: Իր ներգործութեամբ
պողպատէ հողինքը կը պատրաստուին,
և միեւնոյն ատեն բիրտ զգացումներ կ'ազ-
նուանան:

Ազգ մը որքան մեծ թիւով ճշմարիտ
մշակներ ունի, և որքան ժողովրդական
խաւերու մէջ զիտակից ընթերցողներու
քանակ՝ այնքան զօրաւոր է և վստահ իր
յաղթանակին:

Ի՛րն են հայրենիք և ազատութիւն:
Նա անմահ է:

Վ. Ա. Զ. Կ. - ԿՈՐԻՒՆ



ՅԻՇԷ՛ ՄԻ՛ ՄՈՌՆԱՐ

Երբ անսովոր աղմուկով, դուստր իմ, տեսնես փողոցին մէջ
խօսական կայթն ու տարազ՝ թ' եկած է նոր բարեկենդան,
Յիշէ՛ վիճակն ողորմագին թըշուառութեան բիւր զոհերուն,
Մի՛ մոռնար հիւանդանոցն՝ ուր կան մահուան դէմ կռուողներ:

Երբ գեղադէմ, անուշաբոյր և վայելուչ արդուզարդով
Նաղելով ելլես ի պար ճոխ և հընչուն սրահներու մէջ,
Պահ մը ետիդ դարձիր մըտքով, և պիտի մօտ գըտնես դարձեալ
Թըշուառութիւնն որ կու լայ՝ սանդուխներուն քով կըծկըտած:

Երբ վառվրուռ, աչքերուդ մէջ սիրոյ ցուրբերն առաջին
Արփենի ճաճանչներուն պէս գան ժըպտիլ գեղածիծաղ,
Միտ դիր սըրտիդ, յիշէ՛ որ սէրն աղքատին չի ժըպտիր երբեք:

Երբ ողջ ժամեր պըշրանքիդ զոհել կանգնես հայելոյն դէմ,
Գիտցիր որ մին թէ միայն վար գընես գըլխուդ դոհարներէն՝
Ո՛հ, բա՛ւ է մէկն այն՝ մահամերձ հիւանդին տալ առողջութիւն:

Թարգ. Հ. Թ. ԹՈՄՍԵԱՆ

ԿՈՒՆԵՐՐԻՆԵՒ



ՀԱՅՐ ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ

Գըրիչդ առիր արծիւներու փետուրէն
Ուղիմական լեռներուն,
Արտագրութիւնն ալ երկերուդ բիւր հազար
Ըրին քեզ գանկը դարուն:

Աշխատանքէ ոչ մէկ ատեն չըվախցար
Ու քու առջեւ ան դողաց,
Եւ քալեցիր անմահութեան ճամբայէն՝
Դէպ ի երկինքն ու Աստուած:

Սիրեցիր Սէրն ու Հըսկայ վիշտն հոլանի
Ուղեկորոյս մարդկութեան,
Ու խըլեցիր աստեղազարդ երկինքէն
Վառող ցուրբեր յաւիտեան:

Ու երբոր օր մ'ալ Հոմերի քով նըստած
Ունկընդրեցիր խօսքն անոր,
Թըրթըռացին սըրտիդ խորքին մէջ զըւարթ
Հազար թեւեր նորանոր:

Ու քընարիդ ձայնն ըզգեցաւ յանկարծոյն
Հըրապուրիչ պատմութեան,
Հիացումով անոր մօտիկ բիւր մարդեր
Ուխտաւորի պէս եկան:

Բայց մոռացօնքն որչափ ըլլայ ապիրատ
Պիտի ի զո՛ւր տառապի
Քեզ բաժնալու համար մեր տաք սրտերէն՝
Ուր կեանքիդ շուքը կ'ապրի:

Յ. ԴԱԻԹԵԱՆ

ՄԵՏՈՒՍԱ

Մենք հըմայուած ճամբորդներ ենք, ես ու դուն,
Որ կը քալենք եղերքն ի վար ովկեանին,
Դէպ ի կախարդ մեր հանգըրուանն անանուն.
Ուխտաւորներ ճշմարտութեան խորանին:

Մենք որ բոլոր ուշիմ հարցերն հարցուցեր,
Ամէն տաճար այցելեր ենք անձկագին,
Ու սերտեր ենք ուսումներու ամէն սեռ,
Հիմա վշտով մենք վերջ կու տանք մեր հարցին:

Բընութիւնն է բիրտ ու հըզօր Մետուսա,
Որ կ'օրրէ մեզ նայուածքներով հոգեթով,
Ու մենք դիւթուած՝ տըրտում՝ դռնէն մարմա-
[րեայ

Ներս կը մանենք հարցումը մեր մոռնալով...

ՍՓՈՓԱՆՔ

Թող այս ըլլայ քեզ ըսփոփանք, ով վըհատ,
Ու վերքերուդ համար ըլլայ բալասան.
Աշխարհի մէջ ապրող և ոչ մէկ անհատ՝
Ունի պատնէշ կըսկիծին դէմ ու մահուան:

Վէրքերըդ բաց համբոյրին դէմ արեւուն,
Քամին դէմ, անձրեւին դէմ և ձիւնին.
Երբ ընդունայն՝ ալ կը տըխրիս պարտասուն,
Գըլուխիդ դիր հողի կըծքին զովագին:

Ամէն կըռնակ կը ժառանգէ մէկ հատ քար.
Ամէն շահի կը վիճակուի լոկ կորուստ.
Ալ կուրծք չըկայ կուրծքին նըման սա դալար՝
Մեղքի հագուստ, վերքի կապուստ և հարուստ...

ՎԱՏԻՍՍ ՍՕՅԵԱՆ